ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ՝ ԴԱՍՎԱՐ

Թեմա՝ ***Հեքիաթը՝ որպես կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորման և մտածողության զարգացման միջոց***

Հետազոտող՝ ***Մարինե Մարության***

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի թիվ 2
միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

Ղեկավար՝ ***Թամարա Աթայան***

ԳՈՐԻՍ 2023

ՆԱԽԱԳԾԻ ԹԵՄԱՆ

Հեքիաթը՝ որպես կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորման և մտածողության զարգացման միջոց

ՆԱԽԱԳԾԻ ՆՊԱՏԱԿԸ

Հեքիաթի միջոցով զարգացնել երեխայի խոսքը, միտքը, մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական կարողությունների զարգացումը, միմյանց հարգելու, ձեռք մեկնելու կարողության զարգացումը, և խմբով աշխատելու կարողության զարգացումը:

ՆԱԽԱԳԾԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայացնել կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների, երևակայության զարգացման առանձնահատկությունները, դրանց դերն ու նշանակությունը, առաջարկել որոշակի հնարներ և մեթոդներ հեքիաթի միջոցով զարգացնել կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների, մտածողության, երևակայության զարգացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

ՓՈՒԼԵՐԸ

1.Խնդրահարույց հարցի առաջադրում:

2.Հիպոթեզի առաջադրում:

3.Գրական ակնարկ

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՀԱՐՑ

Ինչպես է հեքիաթն ընդլայնում կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունները և մտածողության զարգացմանը:

Հիպոթեզ

Հեքիաթն անհրաժեշտ ժանր է կրտսեր դպրոցականի անձի անհատականության ձևավորման գործում:

Հեքիաթը, որպես գրական ժանր

Վաղ ժամանակներից մարդիկ երազել են կառավարել բնության ուժերը, ըմբռնել աշխարհում տեղի ունեցող ամեն ինչ, երազել են ազատ աշխատանքի, արդարության և երջան մասին: Բոլոր երկրներում մարդկանց երազանքները նման են եղել, բայց ամեն մի ժողովուրդ դրանք արտահայտել է յուրովի: Ժողովրդական այդ երազանքներից ու ակնկալիցներից էլ ծնունդ է առել հեքիաթների զարմանահրաշ աշխարհը, որն ապրում ու զոյատևում է իր հատուկ օրենքներով:

Հեքիաթով դրսևորվել է գեղարվեստորեն ստեղծագործելու, իր հարուստ երևակայությունը արևան բերելու ժողովրդի ձգտումը: Դրա համար էլ հեքիաթը համարվում է գեղարվեստական խոր և բարձր հնարանք: Հեքիաթն ունկնդրից ևս պահանջում է համարձակ ու ստեղծագործական երևակայություն: Պատահում է, որ հեքիաթային ամենահամարձակ հնարանքները դառնում են իրականություն:Արդյոք ձեզ հայտնի է, որ թռչող մեքենայի անունը՝ <<ինքնաթիռ>>, փոխառված է հրաշապատում հեքիաթից: Հարյուրավոր տարիներ առաջ, երբ ոչ մի մարդու դեռ չէր հաջողվել վեր բարձրանալ երկրից, հեքիաթային հերոսը իր ինքնաթիռ-գորգով սավառնում էր երկնքում: Իհարկե, իսկական ինքնաթիռը, որով մարդը երկինք բարձրացավ, նման չէ հեքիաթային ինքնաթիռին, բայց այս վերջինի մեջ իրականություն էր դարձել երկինք թռչելու մարդկության վաղեմի երազանքը:

Թևավոր երազանքների, առաքինի արարքների ու մտքերի շնորհիվ ժողովրդական հեքիա-

թը վաղուց ի վեր գրավում է ողջ աշխարհի գրողների ուշադրությունը: Նրա հենքի վրա են իրենց սքանչելի հեքիաթները հյուսելՊուշկինը, Ժուկովսկին, Մարշակը, Պերրոն,Անդերսենը և շատ-շատերը:
Աշխարհի ժողովուրդների հեքիաթների շարքում աչքի ընկնող տեղ են գրավում նաև հայկական հեքիաթներն իրենց բազմազան՝ կախարդական,արկածային, երգիծական բնույթով: Մեր հեքիաթները ևս ծնունդ են առել վաղնջական ժամանակներում: Ժողովրդի ծոցից ելած տաղանդավոր հեքիաթասացները, պատմելով և սերնդից սերունդ փոխանցելով, հղկել ու կատարելագործել են հեքիաթները և որպես թանկագին ավանդ հասցրել մինչև մեր օրերը: Հայ բանահավաքներն ու բանաստեղծները ջանասիրաբար գրի են առել և կորստից փրկել ժողովրդական բանահյուսության այդ գանձերը: Հեքիաթների, ժողովրդական ստեղծագործության այլ տեսակների հավաքման ու գրի առնելու գործին խանդավառությամբ մասնակցում են նաև կրտսեր դպրոցականներն ու բարձր դասարանցիները:

4.Հարցումներ երեխաների շրջանում

1.Ինչ դեր ունի հեքիաթը ձեր կյանքում:

2.Սիրում եք հեքիաթ կարդալ:

Հետազոտության մեթոդներ

*Գիտական գրականության և ինտերնետ-ռեսուրսների ուսումնասիրություն

*Հարցումների անցկացում

*Դասերի վերլուծություն

Ինչու ընտրեցի ես այս թեման

Հեքիաթն այսօր էլ է մեզ պետք: Այն զվարճանալու և ժամանցի համար չէ միայն: Հեքիաթը հաստատում է արդարության զգացումը և սերը բարու հանդեպ, դաստիարակում մտքի համարձակություն և երևակայության խիզախություն: Այս հատկանիշները մարդուն հարկավոր են եղել բոլոր դարաշրջաններում, իսկ մեր դարաշրջանում հարկավոր են ավելի, քան երբեք, որովհետև մեր ժամանակը չտեսնված մեծագործությունների ու հայտնագործությունների ժամանակ է: Իսկ բոլոր՝ մեծ թե փոքր, հայտնագործություններն սկսվուն են այսպես.
–Իսկ ինչ կլինի, եթե…

Հետազոտության արդիականությունը

Այս թեմայի արդիականությունն այնքանով է մեծ, որ մեր օրերում խնդիր է դարձել կրտսեր դպրոցականի ուսուցման արդյունավետության բարձրացումը հատկապես նրանց ստեղծագործական կարողությունների զարգացումը:Հաշվի առնելով այս խնդիրը՝ փորձել եմ հեքիաթի միջոցով ուսումնասիրել և ներկայացնել այն, որ հեքիաթի օգնությամբ կարելի է զարգացնել կրտսեր դպրոցականի և'ստեղծագործական կարողությունների զարգացումը, և' լեզվամտածողության, և' լեզվազգացողության զարգացումը,և' կապակցված խոսքը:

Ներածություն

Հետազոտողի առաջ չի կարելի հարցերը քննված և վերջնական ձևակերպմամբ դնել,այլ քննարկելիք խնդիրը պետք է վստահել հետազոտողի անձնական աշխատանքին:

Գ.Էդիլյան

Մանկավարժության մեջ ընդունված է առանձնացնել ուսուցման երեք հիմնական ձևեր.
*դոգմատիկ կամ սերտողական
*բացատրական և ակտիվ
*պրոբլեմային կամ զարգացնող ուսուցում:
Առաջին երկու ձևերն ընդունված է անվանել ավանդական:Դրանց նպատակն է՝ գիտելիքների հաղորդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը:Այս դեպքում աշակերտների զարգացումը դառնում է ուսուցման ածանցված, հատուկ չպլանավորված արդյունք: Իսկ երրորդն անվանվում է նորացված/ինովացիոն/ ձև: Վերջինիս և' ռազմավարությունը, և' մարտավարությունն ուղղվում են աշակերտների ներուժի բացահայտմանն ու զարգացմանը:Ուսուցման այս ձևը չի ենթադրում ավանդական ձևի մերժում: Պարզապես ավանդականի կիրառումը դառնում է ուսուցման նպատակին հասնելու միջոց:
Այսպիսով, արդի ուսուցման հիմնական նպատակներն են.
*հաղորդել որոշակի գիտելիքների հանրագումար,
*ձևավորել այդ գիտելիքները կիրառելու կարողություններ,
*սովորել սովորեցնել ,
*ձևավորել ստեղծագործական մտածողություն, նորը ստեղծելու կարողություն:
Հայոց լեզվի ուսուցման գործընթացի կարևոր խնդիրներից մեկը աշակերտների խոսքի զարգացումն է: Այն նպաստում է ստեղծագործական իրադրության ապահովմանը:
Աշակերտների խոսքի հարստացման և զարգացման գործընթացի հիմքում ընկած են ուսումնական աշխատանքը ստեղծագործական դարձնող հնարներ: Այս մասին հոգեբան

Ա.Ա. Լեոնտևը գրել է.<<Որպեսզի մարդը լիարժեքորեն հաղորդակցվի, պետք է սկզբունքո- ռեն տիրապետի կարողությունների մի ամբողջ շարքի. առաջին՝ կարողանա արագորեն և ճշտությամբ կողմնորոշվել հաղորդակցման պայմաններում, երկրորդ՝կարողանա իր խոս- քը ճիշտ պլանավորել, երրորդ՝ունենա ստեղծագործելու ունակություն>>: Վերջին տարիներին մի խումբ գիտաշխատողներ Ս.Պարնասի ղեկավարությամբ ուսուց- ման գործընթացում ստեղծագործական իրադրություն ստեղծելու նպատակով առաջար- կում են՝

1. Ստեղծագործական դրսևորումներին խոչընդոտող արգելքների վերացում: Օգնել աշա- կերտներին՝ ձեռք բերելու ինքնավստահություն, այսինքն՝ շրջապատի հետ հարաբերութ- յունները կառուցել այնպես, որ համարձակ, առանց երկար մտածելու արտահայտեն մտքե- րը: Աշակերտի կողմից մտածված յուրաքանչյուր խելացի դատողության համար պետք է քաջալերել նրան:

2. Մեծ դեր հատկացնել աշակերտի ենթագիտակցությանը, որն աշխատում է անգամ այն ժամանակ, երբ նա անմիջապես չի լուծում տրված առաջադրանքը:Նույնիսկ մակերեսայնո- ռեն արտահայտված մտքերն ու դատողությունները պետքէ նկատվեն ժամանակին, հղկվեն պարզաբանվեն և օգտագործեն:

3. Սխալներն ուղղել զգուշությամբ, հատկապես բանավոր խոսքում օգտագործել ուղղման ճիշտ մեթոդներ, հաճախակի չընդհատել աշակերտի խոսքը, չկանխել մտքի զարգացումը, չվնասել նրան: Ոչ ճիշտ մոտեցման պատճառով աշակերտը կխուսափի խոսք կառուցել, անվստահ կլինի իր խոսքի նկատմամբ,և կխաթարվի նրա մտքի թռիչքը:

4.Պատկերավորության միջոցների, փոխաբերությունների և համեմատությունների օգտա- գործումն ընդլայնում են աշակերտների ստեղծագործական հնարավորութունները:

5.Մտավոր նախավարժանքի հնարավորության ստեղծումը;Աշակերտներին տալ այնպիսի առաջադրանքներ, որոնք մղում են մտածելու և մտքերն ազատ արտահայտելու:

6.Խթանել աշակերտների երևակայությունը: Կրտսեր դպրոցականի երևակայությունն ան- սահման է: Այն ստեղծագործական մտածողության հիմքն է: Ուստի պետք է զարգացնել այն

7.Բացատրական ընթերցանության մեթոդի ճիշտ օգտագործումը կնպաստի շրջապատն ընկալելու ունակության ակտիվացմանը, ընդարձակ և հագեցած գիտելիքներ ստանալու գործընթացին:

8.Ստեղծագործական հնարավորությունների զարգացման կարևոր պայմաններից է գիտե- լիքների ցանկի ընդլայնումը: Յուրացված գիտելիքները պետք է օգտագործվեն, հակառակ դեպքում դրանք կմատնվեն մոռացության:

9.Երեխան պետք է զգա իր առաջխաղացումը, հետազոտական կարողությունների զարգա- ցումը, դրանց միջոցով ճանաչի սեփական հնարավորությունները:Այս մոտեցումը կօգնի նրան՝ դատողություններ անելու, եզրահանգումներ կատարելու:

10.Ուսուցման ընթացքում ուսուցչի խնդիրն է՝ դասագրքի և ուսումնաօժանդակ նյութերի ճիշտ օգտագործմամբ աշակերտների մեջ ճանաչողական կողմնորոշում ձևավորել, նրանց ներգրավել ստեղծագործական գործընթացի մեջ:

Ուսումնական նյութի ընկալմանն ու մշակմանը, մասնավոր, կոնկրետ տպավորությունն-

րի ընդհանրացմանը նպաստող մեխանիզմները մշակվել են Ջ.Բրունների ղեկավարությամբ իրականացված հոգեբանամանկավարժական հետազոտություններում: Այդ տվյալներին համապատասխան՝ աշակերտների մեջ հասկացությունները պետք է ձևավորվեն ստեղծագործաբար, հետազոտական որոնման ճանապարհով:

Մեր կրթական համակարգի հիմնական նպատակներից մեկը հասարակության համար պիտանի, ինքնուրույն, ստեղծագործող, որոշումներ կայացնող, ներդաշնակորեն հաղորդակցվող, ճիշտ կողմնորոշվող անհատի դաստիարակումն է: Այս նպատակին հասնելու համար դասարանում պետք է ապահովել այնպիսի միջավայր, ուր հնարավու լինի զարգացնել աշակերտների ինքնուրույն մտածողությունը: Նման բարենպաստ միջավայր ստեղծելու միջոցներից է համագործակցային ուսուցման մեթոդների կիրառումը:

Ուսուցումը համագործակցային է, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր մտահղացում, նորարարություն իրականացնելու ուղղությամբ: Ցանկալի է, որ նման խմբերում ընդգրկվեն տարբեր կարողություններով և տարբեր մտածողությամբ օժտված աշակերտներ:Այս դեպքում խումբը հնարավորություն է ստանում առաջարկվող նյութը դիտարկել իր ողջ բազմազանության մեջ: Աշակերտներից յուրաքանչյուրը կարողանում է ներկայացնել իր տեսակետը և ծանոթանալ մյուսների կարծիքներին:Այս կերպ նրանք սովորեցնում են միմյանց և սովորում իրարից: Այս գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու դեպքում միահյուսված կիրականացվեն ստեղծագործական մտածողության և դրա հիմքերի ամրապնդման այնպիսի հնարներ,ինչպիսիք են արագությունը, ճկունությունը, ինքնատիրապետությունը:Այդ մեթոդի կիրառումը կօգնի նաև երեխաների հետաքրքրությունների խթանմանը և ստեղծագործական ակտիվության զարգացմանը: Խմբային աշխատանքի ամենագնահատելի հատկանիշը խմբի անդամների միջև համագործակցության առկայությունն է: Դրա արդյունավետությունը կախված է մեթոդապես ճիշտ տարվող գործունեությունից: Ուսուցիչը պետք է հաշվի նստի աշակերտների ինքնուրույն կարծիքների, կայացրած որոշումների, միմյանց հետ ազատորեն հաղորդակցվելու իրավունքների հետ:

Խմբային աշխատանքն ստեղծագործական որոշումների հանգեցնելու նպատակով անհրաժեշտ է.

ա. Վերացնել ստեղծագործական դրսևորումները խոչընդոտող ներքին արգելքները, այսինքն աշխատանքային հարաբերությունները կառուցել մեթոդական ու հոգեբանական այնպիսի հիմքերով, որոնց առկայությամբ կրտսեր դպրոցականները չեն մտահոգվի իրենց դատողությունների ու պատասխանների սխալ լինելու պարագայով:

բ.Ստեղծել մտավոր նախավարժանքի հնարավորություն: Սկզբնական շրջանում առաջադրանքների խմբային կատարման իրադրությունը կարող է թվալ անսովոր և շփոթմունք առաջացնել: Դրա համար անհրաժեշտ է աշակերտներին նոր իրադրությանն ընտելանալու հնարավորություն ընձեռնել:

գ. Զարգացնել աշակերտի՝ շրջապատն ընկալելու ունակությունը, հոկել նրա նրբանկատությունը:

դ. Ընդլայնել գիտելիքների պաշարը:

ե.Ստեղծել նպաստավոր պայմաններ,որպեսզի աշակերտներն ստեղծագործական գործընթացում ունենան անհատական ներդրում:
Համագործակցային ուսումնառության արդյունավետ իրականացման պահանջներն են.
*Ստեղծել միջավայր, ուր թե՛ ուսուցիչը, թե՛ աշակերտները մտածում են:
*Աշակերտներին տրամադրել իմաստավորված ուսումնական փորձառության ձեռքբերման պայմաններ:
*Պետք է հստակ և պարզ ներկայացնել կատարվելիք աշխատանքի նպատակն ու ակնկալվող արդյունքները:
*Ամեն կերպ խթանել աշակերտների մտավոր աշխատանքը:
*Ստեղծել նորարարական մտքերի և բազմազանության հնարավորություններ ընձեռող մթնոլորտ:
Համագործակցային ուսումնական միջավայր ապահովելու դեպքում կարելի է ակնկալել հետևյալ արդյունքները.
*Հաջողության հասնելու ավելի մեծ շահագրգռություն և սովորելու ներքին մղումի ձևավորում:
*Իրավիճակներն ուրիշների տեսանկյունից դիտարկելու կարողություն:
*Հաղորդակցվելու, խոսակցին լսելու հմտություններ:
*Հանդուրժողականության ձևավորում:
*Համագործակցելու և ոչ մրցակցելու գիտակցության ձևավորում:
*Իրենց և այլոց ընկալելու կարողություն:
*Բարձր ձեռքբերումների և կայուն մտապանման ձգտում:
*Ցանկացած նորամուծության անհրաժեշտության գիտակցման խրախուսում:
Համագործակցային ուսումնառության գործընթացում աշակերտներն զգում են, որ ընդհանուր առաջադրահքը կատարելու համար իրենք միմյանց կարիքն ունեն:
Շատ կարևոր է խմբում փոխադարձ համագործակցության և փոխօգնության մթնոլորտի ձևավորումը: Աշակերտները միմյանց օգնելով, մտքեր փոխանակելով, սովորելու մեջ միմյանց ոգևորելով՝ ոչ միայն ձեռք են բերում վարքային հմտություններ,այլև անմիջականորեն խթանում են միմյանց ուսումնառությունը և նպաստում ուսման արդյունավետության բարձրացմանը:
Աշակերտները միմյանց բացատրում են,քննարկում, մեկմեկու հաղորդում իրենց իմացածը: Ուսուցիչը խմբերն այնպես է դասավորում, որ աշակերտները միասին նստեն ու զրուցեն առաջադրանքի տաբեր կողմերի և դրա կատարման տարբեր հնարավորությունների մասին: Յուրաքնչյուր աշակերտի առաջադիմությունը հաճախ գնահատվում է: Ստացված արդյունքը դառնում է միաժամանակ խմբի յուրաքանչյուր անդամի գիտելիքը և տվյալ խմբի աշխատանքի գնահատման հիմքը:
Խմբերը չեն կարող արդյունավետ համագործակցել, եթե աշակերտները չեն կիրառում համատեղ աշխատանքների համար անհրաժեշտ հաղորդակցական հմտությունները: Ուսուցիչը պետք է նպատակաուղղված կերպով ձևավորի երեխաների հաղորդակցական կարո-

ղություններն ու հմտությունները: Այդ գործընթացն իր մեջ ներառում է ղեկավարման, որոշումներ կայացնելու, վստահության, հաղորդակցվելու, հակասությունների կառավարման և լուծման կարողություններ:

Համագործակցային դաս
Հեքիաթը՝ որպես կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորման ու մտածողության զարգացման միջոց

Ակնկալվող արդյունքներ
*Մասնակցելով հետազոտական աշխատանքին,աշխատելով համապատասխան խմբում՝ ստեղծագործաբար կկիրառեն ձեռք բերած գիտելիքները կամ իրենց, կամ խմբի մյուս անդամների մշակած նյութերը:
*Կլսեն ուսուցչի կամ դասընկերների խոսքը հեքիաթի, դրա հատկանիշների,առանձնահատկությունների վերաբերյալ, կբանավիճեն՝նոր փաստարկներ ու հիմնավորումներ ներկայացնելով:

Դասապլան

Դասի թեման- ***Պապիկը, որը չէր կարողանում հեքիաթ պատմել***

Հիմնավորում՝

Դասն արժեքավոր է նրանով,հնարավորություն է ընձեռնում՝
*դրանում ներդնել որոշակի արժեքային համակարգ,
*դաստիարակչական բազմաթիվ խնդիրներ լուծել,
*երեխան ձեռք է բերում հաղորդակցական ունակություններ, հետևաբար հաղորդակցական ակտիվություն,
*ընկալում է շրջապատող աշխարհը և իմաստավորում այն,
*ձեռք է բերում միջավայրում արագ կողմնորոշվելու, սոցիալական վարքի փորձ,
*կարողանում է ինքնուրույն ձևավորել աշխարհայացք,
*զարգացնել ստեղծագործական մտածողություն:

Խնդիրներ-Աշակերտները պետք է
1.Զրույց-երկխոսության ընթացքում ակտիվություն ցուցաբերեն իրենց իմացածն ընկերներին հաղորդելու, իրենց կարծիքն արտահայտելու հարցում:
2.Դերերով ընթերցեն տեքստը՝ձայնի բարձրությունն ու տեմպը համապատասխանեցնելով իրավիճակների և հերոսի հույզերին:

3.Մասնակցեն տեքստի բովանդակության վերլուծությանը՝դատողություններ անելով տեքստի հիմնական գաղափարի շուրջ:
4.Խմբային գործունեության ընթացքում խմբի անդամներին բացատրեն առաջադրանքը, նպաստեն դերային խաղը ճիշտ ներկայացնելուն:

<u>Նախադրյալներ՝</u>

Դասն արդյունավետ կերպով յուրացնելու համար աշակերտները նախապես պետք է կարդան հեքիաթներ, որոշակի գաղափար ունենան հայտնի հեքիաթագիրների մասին:

<u>Գնահատում՝</u>

Կազմել ոչ ծավալուն խառնաշփոթ հեքիաթ՝պապիկի օրինակով:

<u>Օգտագործված մեթոդներ և հնարներ՝</u>

*<<Գուշակիր՝ով է մեր հյուրը>>,

*<<Խմբավորում>>,

*<<Նախնական կազմակերպիչ>>,

*<<Կանխագուշակում՝նկարներով>>,

*<<Ընթերցողի թատրոն>>:

Ջաննի Ռոդարի

ՊԱՊԻԿԸ, ՈՐԸ ՉԷՐ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՀԵՔԻԱԹ ՊԱՏՄԵԼ

_ Լինում է , չի լինում՝ մի փոքրիկ աղջիկ է լինում, անունը՝ Դեղին գլխարկ…

- Ոչ թե Դեղին, այլ Կարմիր…
- Ա’խ, հա՜, Կարմիր գլխարկ… Մի անգամ մայրը կանչում է նրան և ասում. <<Իմ սիրու’ն կանաչ գլխարկ…>>
- Չէ,’ ինչ Կանաչ, ասացի՝ Կարմիր:
- Լա'վ, լա'վ՝ Կարմիր: <<Գնա' մորաքրոջդ տուն և նրան տար այս տապակած կարտոֆիլը…>>:
- Ո'չ, ո'չ: Մայրիկն ասում է. << Գնա' տատիկի տուն և նրան տար այս կարկանդակները>>:

- Լա'վ, թող այդպես լինի: Աղջիկը գնում է և անտառում հանդիպում ընձուղտին:
- Նորից ամեն ինչ խառնեցիր: Նա հանդիպում է գայլին և ոչ թե ընձուղտին:
- Եվ գայլը հարցնում է նրան. << Ինչքան կլինի՝ վեց անգամ ութ>>:
- Լա՞վ, էլի պապի'կ: Գայլը հարցնում է. << Ուր ես գնում>>:
- Ճիշտ ես ասում: Իսկ Սև գլխարկը պատասխանում է…
- Պապի'կ, դա Կարմի'ր, Կարմի'ր գլխարկն էր:
- Լա'վ, լա'վ՝ Կարմիր: Նա պատասխանում է. << Ես գնում եմ շուկա՝ բալի մուրաբա գնելու>>:
- Ոչ մի նման բան: << Ես գնում եմ տատիկի մոտ, բայց մոլորվել եմ>>:
- Ճի'շտ է: Իսկ ձին նրան ասում է…
- Ինչ ձի: Կարմիր գլխարկը գայլի' էր հանդիպել:
- Վա՞յ, մոռացա, իհարկե՝ գայլ, որն էլ ասում է. <<Նստի'ր յոթանասունվեց համարի ավտոբուսը, գնա' մինչև հրապարակ, թեքվի'ր ձախ, այնտեղ կտեսնես ներքև տանող աստիճաններ: Այնտեղ կտեսնես մի հարյուր դրամանոց: Աստիճաններին ձեռք չտաս, իսկ հարյուր դրամանոցը վերցրու' և պաղպաղակ գնի'ր քեզ համար>>:
- Պապի'կ, դու հեքիաթ պատմել բոլորովին չգիտես: Իսկ պաղպաղակ, ի՞նչ էլ լինի, դու պիտի գնես ինձ համար»
- Լա'վ: Ահա քեզ հարյուր դրամ:
  Եվ պապիկը նորից սկսեց թերթ կարդալ:

<u>Բուն դասը</u> `

Խթանում

Կիրառվում է<<Գուշակիր՝ ով է մեր հյուրը>>հնարը:Ուսուցիչը,տիկնիկ-մարդուկին վերցնելով,փոխված ձայնով ասում է. <<Բարև, սիրելի աշակերտներ, ես ժողովրդական բանահյության ամենատարածված ու սիրելի նմուշներից եմ: Ես ծնվել եմ ամենավաղ ժամանակներում և դարերի միջով, սերնդեսերունդ փոխանցվելով՝հասել եմ մինչև ձեր օրերը:Ես սիրում եմ թափառել, ճամփորդել, լինում եմ տարբեր ժողովուրդների մոտ: Ինձ սիրում են և մեծերը, և փոքրերը, որովհետև ես շատ հետաքրքիր եմ ու գրավիչ: Ես գովաբանում եմ բարին, ազնիվը, փառաբանում խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը, սակայն խարազանում եմ չարը, ագահությունը, խորամանկությունը, ծուլությունը: Ես հայտնի եմ և մարդկանց, և կենդանիներին, և բույսերին, որովհետև ես կախարդական եմ, երբեմն էլ հրաշքներ եմ գործում: Ինձ պատմում են,երգում, բեմադրում են, կարդում նաև գրում են:Ճիշտն ասած,սիրելի փոքրիկներ, ինքս էլ չգիտեմ՝ես լինում եմ, թե չեմ լինում>>: Ուսուցիչը հարցնում է աշա-

կերտներին, թե ճանաչեցին արդյոք տիկնիկ-մարդուկին, ով է նա: Երեխաները գուշակում են, որ իրենց հյուրը հեքիաթն է: Այնուհետև հեքիաթ-մարդուկը հարց է տալիս աշակերտներին:

Ինչ է հեքիաթը: Ինչ գիտեք հեքիաթի մասին:

-Հեքիաթը գեղեցիկ հյուսվածք է՝ գունագեղությամբ ու գեղարվեստական հնարանքներով առանձնացող և ժողովրդական կենդանի լեզվով համեմված մի գոհար:Աշխարհի բոլոր ժողովուրդներն էլ ունեն իրենց հեքիաթները: Դրանք տարբերվում են թե՛ բովանդակությամբ, թե՛ յուրահատուկ բազմազանությամբ: Սակայն բոլոր ժողովուրդների հեքիաթներին բնորոշ են ընդհանրություններ՝ ժողովրդի ազատության ձգտումը, նվիրական պայքարը անկախության ու երջանկության համար, կյանքի լիիրավ տերը դառնալու ցանկությունը և սեփական ուժի անպարտելիության հավատը:
Հեքիաթը ստեղծագործության մի տեսակ է,երբ առասպելական հերոսներին փոխարինելու են գալիս սովորական մարդիկ /հիարկե,նրանցից շատերն օժտված են գերբնական ուժով/: Հեքիաթային հերոսները ենթարկվում են փորձությունների ու դժվարությունների, բայց երբեք չեն ընկճվում: Նրանք պատրաստ են իրենց կյանքը նվիրաբերել ժողովրդին ու նրա ազատությանը: Հեքիաթներն իրենց վրա կրում են պատմական բոլոր դարաշրջանների ժողովրդական կյանքի ու մտածողության դրոշմը:Դարերի պատմություն ունեցող իմաստուն հեքիաթները շրջում են աշխարհով մեկ, անընդհատ փոփոխվում ու հարստանում՝ ամենևին չկորցնելով իրենց թարմությունը:

Կիրառել <<Խմբավորում>>մեթոդական հնարը:

կենդանական

.

.

իրապատում. . . .Հեքիաթ. . . .կախարդական կամ հրաշապատում

.

.

երգիծական

Կիրառել <<Նախնական կազմակերպիչ>>մեթոդական հնարը՝ շարունակելով զրույց-երկխոսությունը հեքիաթ-մարդուկի և աշակերտների միջև:
Հեքիաթ-մարդուկը տալիս է հարցերը.
*Ինչ հեքիաթներ գիտեք և ինչ հեքիաթ եք կարդացել:Որ հեքիաթն է ձեզ շատ դուր եկել:
*Այդ հեքիաթի որ հերոսին եք ուզում նմանվել:
*Ինչ հեքիաթագիրներ գիտեք:
*Ինչ շարժանկարներ կամ մուլտիպլիկացիոն ֆիլմեր եք տեսել ձեզ ծանոթ հեքիաթի հիման վրա նկարահանված:
*Համեմատել ընթերցած հեքիաթի և դրա հիման վրա ստեղծված ֆիլմի բովանդակություն-ները/այստեղ վարպետորեն, անուղղակի ձևով ընդգծել գրական-գեղարվեստական երկի առաջնայնությունը և կարդացած լինելու առավությունը/:

Իմաստի ընկալում

Կիրառել <<Կանխագուշակում՝ նկարներով>> մեթոդական հնարը:
Գրատախտակին փակցնել Կարմիր գլխարկի, ընձուղտի, ձիու, ավտոբուսի, կարտոֆիլի նկարներ: Հարցնել.
*Ինչ եք կարծում, որ հեքիաթը չէր կարողանում պատմել պապիկը: Իսկ ինչ կապ կարող է ունենալ ընձուղտը, ավտոբուսը <<Կարմիր գլխարկը>> հեքիաթի հետ: Ինչ եք կարծում՝ ինչ-պես էր պատմում պապիկը հեքիաթը:

Տեքստի լուռ ընթերցում:

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու նպատակով

*Հաստատվեցին ըստ նկարների ձեր կատարած կանխատեսումները տեքստի բովանդա-կության վերաբերյալ:
*Ովքեր էին հերոսները:
*Որ հեքիաթը չէր կարողանում պատմել պապիկը:
*Ամեն անգամ, երբ պապիկը խառնաշփոթ էր ստեղծում հեքիաթի մեջ, ինչպես էր արձա-գանքում թոռնիկը:

Տեքստի բարձրաձայն ընթերցում դերերով: Ընթերցումից առաջ քննարկել հետևյալ հարցերը.
*Քանի հերոս է ընդգրկված տեքստում:
*Ինչ ձևով է շարադրված տեքստը/երկխոսության/:
*Ինչ է երկխոսությունը և ինչպես պետք է ընթերցել այն:
*Մի քանի նախադասությունների վերջում դրված են բազմակետեր:Ինչ եք կարծում՝ ինչու և ինչպես պետք է ընթերցել այդ նախադասությունները/պապիկը կարծես անընդհատ ուզում է շարունակել, բայց աղջիկը ընդհատում է նրան/:

Տեքստն արտահայտիչ ընթերցելու համար կիրառել <<Ընթերցողի թատրոն>> մեթոդական հնարը: Դասարանը բաժանել խմբերի: Աշակերտները վերցնում են քարտեր /քարտերը համարակալված են/1,2,3,4//: Քարտերի նույն համարն ունեցող աշակերտները միանում են և ստեղծում խմբեր: Խմբերը բաժանվում են ենթախմբերի՝ զույգերի/ընտրությունը ցանկությամբ/: Խմբերի զույգերից մեկը անվանվում է <<Ընթերցողներ>>, մյուսը՝ <<Գնահատողներ>>: Ընթերցողների յուրաքանչյուր խումբ պետք է կարդա դերերով: Ընթերցող յուրաքանչյուր մասնակից ընտրում է որևէ կերպարի դեր/կամ պապիկի, կամ թռոնիկի/: Այնուհետև զույգերին հնարավորություն է տրվում կարդալու տեքստը մի քանի անգամ՝ միասին որոշելու համար, թե ինչպես պետք է հնչի կերպարների խոսքը: Այնուհետև զույգերը ներկայացնում են տեքստը: Երբ ներկայացումն ավարտվում է, <<Գնահատողները>> ընտրում են լավագույն զույգին, ով կարողացել է ճիշտ հնչերանգով ընթերցել պապիկի և թռոնիկի խոսքերը՝ նրանց տրամադրության և հույզերին համապատասխան:

Աշխատանքներ տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ անելու նպատակով:

Զրույցի մոտավոր բովանդակությունը

*Ընտրիր և կարդա այն տողերը,որոնք համընկնում են քեզ քաջ ծանոթ հեքիաթի բովանդակությանը:
*Ինչ հնարամտությամբ է պապիկն ազատել իրեն հեքիաթ պատմելու պարտականությունից և շարունակել թերթ կարդալ:
*Ինչու պապիկի պատմությունն այդքան զվարճալի ստացվեց/օրինակ՝ որովհետև պապիկը չար գազան գայլին փոխարինում է անվնաս կենդանիներով՝ ընձուղտով կամ ձիով, փոխում է հեքիաթի ավարտը և այլն/:

Աշխատանք խմբերով

Առաջադրանք խմբերին - Ձեր կարծիքով պապիկն ինչու <<չէր կարողանում>> պատմել հեքիաթը: Դատողություններ արեք նշված տարբերակի շուրջ:

1.Պապիկն ուզում էր պարզել,թե թռոնիկը հիշում էր հեքիաթը:
2.Պապիկն ուզում էր պարզել, թե որքան ուշադիր է լսում թռոնիկը:
3.Պապիկն ուզում էր զվարճացնել ու զարմացնել թռոնիկին:
4.Պապիկը ցանկանում էր թռոնիկին մասնակից դարձնել հեքիաթի ստեղծմանը:

Առաջադրանք բոլորին

Հարց-Գուցե պապիկը չգիտեր հեքիաթը:

Պատասխան-Իմ կարծիքով պապիկը գիտեր հեքիաթը:Նա ուղղակի չէր ուզում պատմել:
Հարց-Ինչու:

Կատարել ընդհանուր եզրակացություն:

Օրինակներ՝

-որովհետև այդ պահին պարզապես չէր ցանկանում պատմել,
-որովհետև ժամանակ չուներ ,
-որովհետև ուրիշ գործ ուներ ,
-որովհետև տրամադրություն չուներ,
-որովհետև թերթում կարդացել էր այնպիսի լուրեր, որոնց պատճառով տրամադրությունը հեքիաթային չէր :

Եզրակացություն

Թոռնիկը շատ էր ուզում, որ պապիկը պատմի հեքիաթը: Բայց հաշվի չէր առել, որ եթե ցանկանում ենք, որ իրականանան մեր ցանկությունները, ապա պետք է հաշվի առնել դիմացինի տրամադրությունը և հնարավորությունը:

-Եկեք այնպես անենք, որ թոռնիկը հասկանա իր սխալը:Նա գնացել է խանութ: Նրա ձեռ-քին կա 100 դրամ: Ինչ կարող է նա գնել 100 դրամով:

Օրինակներ
1.Մեկ պաղպաղակ՝100 դրամանոց,իր համար;
2.Երկու պաղպաղակ՝50 դրամանոց,մեկը պապիկի համար,մեկը՝ իր:
3.Մեկ պաղպաղակ՝80 դրամանոց,իր համար,մեկ ծամոն՝20դրամանոց,պապիկի համար:
4.Մեկ պաղպաղակ՝80 դրամանոց,իր համար,երկու ծամոն՝10 դրամանոց,մեկը իր համար, մյուսը՝պապիկի:
5.100 դրամանոց մեկ թերթ պապիկի համար:

Առաջադրել աշակերտներին պատմելու Շառլ Պերրոյի <<Կարմիր գլխարկը>> հեքիաթը մինչև վերջ: Եվ քանի որ հեքիաթը մանկուց ծանոթ է բոլոր երեխաներին, հեքիաթի շուրջ կարելի է տալ ոչ թե միայն մտաբերման կամ հիշողության մակարդակի հարցեր, այլ,<<բաց հարցեր>>, որոնք պահանջում են խոր և քննադատական մտածողություն:Այսպես.

*Ինչը ստիպեց Կարմիր գլխարկին ուտելիքով լի զամբյուղը տանել տատիկին:
*Ինչից իմացաք, որ գայլը սոված էր:

*Ինչ ազդեցություն ունեցավ ահավոր սովը գայլի վրա:
*Եթե Կարմիր գլխարկը տուն վերադառնա, ինչ կասի նրան մայրիկը: Ինչու:
*Ինչու Կարմիր գլխարկն անտառի միջով գնաց տատիկի մոտ:
*Ինչպիսի մարդ էր որսորդը: Որտեղից իմացար, որ նա այդպիսին է:
*Ինչ խորհուրդ կտայիր Կարմիր գլխարկին:Ինչու:
*Ինչով է Կարմիր գլխարկը նման տատիկին: Ինչով են նրանք տարբերվում իրարից:

Ստեղծագործական աշխատանք

Ընտրել ձեզ ծանոթ հեքիաթներից մեկը:Պապիկի նման խառնաշփոթ ստեղծելով գրել այն: Վերջում քննարկել, թե ում հորինածն է ամենազվարճալին: Աշխատանքը կատարել խմբերով:

Կշռադատում

Անդրադարձ և ամփոփում

Ծանոթացում հեղինակին

Ուսուցիչը ներկայացնում է պատմվածքի հեղինակին՝ Ջաննի Ռոդարիին.

Իտալացի հեքիաթասաց Ջաննի Ռոդարին ծնվել է Իտալիայի մի փոքրիկ քաղաքում: Ջաննին մանկության տարիներին գրում էր բանաստեղծություններ, ջութակ էր նվագում, հաճույքով նկարում էր: Նա երազում էր դառնալ հայտնի նկարիչ:
Վաղ տարիքից Ռոդարիի կողքին են եղել Հեքիաթային փերին, Հրաշագործը և Երևակայությունը, որոնք ոչ բոլորին են ընտրում: Ավելի ճիշտ, մանկական տարիքում նրանք այցելում են բոլորին, բայց հետագայում, ի վերջո, մնում են իրենց ամենասիրելիների մոտ: Նրանք թողնում են չար, դաժան, ագահ և անարդար մարդկանց և մնում են այնտեղ, որտեղ իշխում են բարությունն ու կարեկցանքը:
Ջաննի Ռոդարին բավականին երիտասարդ տարիքում /17 տարեկան/ սկսեց աշխատել գյուղական դպրոցում՝ որպես կրտսեր դասարանների ուսուցիչ:
Ջաննին հրաշալի ուսուցիչ էր, նա և իր աշակերտները հորինում էին հեքիաթներ, խաղում էին զանազան լեզվատրամաբանական խաղեր: Այդպիսի պարապմունքները երեխաներին երջանկություն էին պարգևում: Եվ կարող է արդյոք,Երևակայության Փերին հեռանալ այդպիսի հրաշալի մարդուց:
Ընդհակառակը, Փերին հիացմունքով էր նայում այդ անսովոր չափահաս մարդուն և երբեմն էլ օգնում էր նրան գիրք գրել: Սակայն Ջաննին էլ էր սիրում Երևակայության Փերիին: Նույնիսկ, ի պատիվ նրա, նա երեխաների և մեծահասակների համար գրել է <<Երևակայության քերականություն>> վերնագրով գիրքը, որն այն մասին է, թե ինչպես երեխաներին սովորեցնել երևակայելու և հորինելու պատմություններ:
Երբ կարդում ես Ջաննի Ռոդարիի ստեղծագործությունները, նրա հերոսները դառնում են հավատարիմ ընկերներ ամբողջ կյանքի ընթացքում:

<<Իհարկե, կարելի է մտնել հիմնական մուտքով, բայց կարելի է նաև սողոսկել պատուհանից,և դա ավելի զվարճալի է>>,-գրում է Ջաննի Ռոդարին:
Իր պատմությունների նման հետաքրքիր է հեղինակի կյանքի պատմությունը:
Փոքրիկ Ջաննին երազում էր դառնալ խաղալիքների վարպետ: Նա ուզում էր հորինել անսովոր խաղալիքներ, այնքան ծիծաղելի, ու երբեք չձանձրացնեն երեխաներին: Ջաննի Ռոդարին համոզված էր, որ խաղալիքները նույնքան կարևոր են, որքան գրքերը:
Ջաննիի՝ խաղալիքների վարպետ դառնալու երազանքը դժբախտաբար չիրականացավ: Անցան տարիներ: Ռոդարին դարձավ գրող,և նրա երազանքն իրականացավ այլ կերպ. նա ստեղծեց բառե խաղալիքներ: Ամենաբարդ և ամենապարզ իրերի մասին Ռոդարին կարող էր խոսել և՛ լուրջ, և՛ կատակով: Նա հրճվանք ապրեց նաև այն ժամանակ, երբ խաղալիքների խանութներում տեսավ իր ստեղծած հերոսներին:

Դասն ավարտել Սուրեն Մուրադյանի հետևյալ քառատողի բովանդակության քննարկմամբ.

Հեքիաթները խելոք են միշտ,
Թեկուզ խառն են՝ և՛ սուտ, և՛ ճիշտ,
Սուտը խելքի մաղո՛վ մաղենք,
Ճշտից խրատ ու խե՛լք քաղենք:

Եզրակացություն

Ամփոփելով<<Հեքիաթը՝ որպես կրտսեր դպրոցականի իմացական հետաքրքրությունների ձևավորման և մտածողության զարգացման միջոց>> նախագիծը՝ եկանք հետևյալ եզրակացության.

1.Հեքիաթն իրականացնում է կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների կարևորագույն որակների ձևավորման գործառույթները:

Հեքիաթը հեշտացնում է սուբյեկտրերի միջև փոխհարաբերությունների համակարգի գիտակցումը և նվազեցնում է բացասական տպավորությունների ազդեցությունը հնարավորինս շատ ինֆորմացիա ստանալու դեպքում:

Հեքիաթի լեզուն, լինելով մարդկային փոխհարաբերությունների հիմնական լեզուներից մեկը և միաժամանակ արվեստի հիմնական միջոց, ապահովում է ստեղծագործական կարողությունների բացահայտումը:

Հեքիաթի միջոցով սեփական պատկերացումների արտահայտումը նպաստում է աշակերտի ինքնագիտակցության զարգացմանը:

Հեքիաթը դառնում է կապող օղակ ուսուցչի և աշակերտի միջև:

2.Չնայած տեխնոլոգիական առաջընթացին, որը հեքիաթը դարձնում է իրականություն, երեխաները ձգտում են կախարդանքի ու հրաշքի: Եվ դա զարմանալի չէ:Չէ որ հեքիաթներն արթնացնում են երևակայությունը, դուռ են բացում դեպի անճանաչելին, միավորում են մարդկանց և, ի վերջո, զարդարում են կյանքը:

Այսպիսով՝ վերջում հավելենք այն, որ շատ կարևոր է որ ուսուցչի և աշակերտի միջև լինի դրական հաղորդակցություն: Քանի որ կրտսեր դպրոցականները 6-9 տարեկան մանուկներ են, հարկավոր է զգույշ լինել նրանց մանկության հետաքրքրությունների հետ և թույլ տալ, որ երեխան իր հոգու մաքրությամբ որքան հնարավոր է երկար ապրի հեքիաթային աշխարհում, որովհետև կյանքը, այնուամենայնիվ, լի է բազմաթիվ դժվարություններով:

Օգտագործված գրականություն

1.Ինչպես պլանավորել մայրենիի դասը: 3-րդ դասարան/Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Ա.Բալայան.-Եր.:<<Զանգակ>>հրատ.2017
2.Մայրենի 3: Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Վ.Սարգսյան, Կ.Թորոսյան և ուրիշներ.2016
3.Նախաշավիղ 1.2003
4.Նախաշավիղ 1-2.2005
5.Նախաշավիղ 1-2.2009
6.Հանրագիտարաններ